

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

«Պետական պարտքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի
նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1141-26.08.2025-ՖՎ-011/0), «Հայաստանի
Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և
լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1141¹-
26.08.2025-ՖՎ-011/0), «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու
մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1141²-26.08.2025-ՖՎ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված
«Պետական պարտքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի
նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1141-26.08.2025-ՖՎ-011/0), «Հայաստանի
Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և
լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1141¹-
26.08.2025-ՖՎ-011/0), «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու
մասին» օրենքի նախագիծը (այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական
փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և
վերլուծական վարչությունում:

Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական,
սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես
նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման
անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝
Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից
նշենք հետևյալը.

1. Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող «Պետական պարտքի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանական պարտավորությունը (բացառությամբ բյուջետային երաշխիքի) ներառվում է պետական պարտքի մեջ, եթե տեղի են ունենում պայմանական պարտավորության հիմքում ընկած դեպքերը կամ պայմանները: Կառավարության պայմանական պարտավորության հիմքում ընկած դեպքերի կամ պայմանների տեղի ունենալու ժամանակ դրանք ձևակերպվում են որպես կառավարության պարտքային պարտավորություն: Համայնքի պայմանական պարտավորության հիմքում ընկած դեպքերի կամ պայմանների տեղի ունենալու ժամանակ դրանք ձևակերպվում են որպես համայնքի պարտքային պարտավորություն:

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված իրավադրույթն իրավական որոշակիության տեսանկյունից՝ հստակեցնելով, թե որոնք են պայմանական պարտավորության հիմքում ընկած դեպքերը կամ պայմանները:

2. Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 12-րդ հոդվածով կարգավորվում են կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարության և փոխառությունների տարեկան ծրագրի հետ կապված հարաբերություններ, մինչդեռ համայնքների պարտքի միջնաժամկետ ռազմավարության և փոխառությունների տարեկան ծրագրի հետ կապված հարաբերությունների կարգավորման վերաբերյալ դրույթները բացակայում են: Տվյալ դեպքում Օրենքի հստակությունն ու կանխատեսելիությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք Օրենքում սահմանել նաև համայնքների պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարության և փոխառությունների տարեկան ծրագրի մասով դրույթներ:

3. Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն)» բառերը առաջարկում ենք փոխարինել «**Կառավարության**» բառով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-րդ մասի պահանջը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ»:

Վերոգրյալ իրավադրույթը հաշվի առնելով Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում նշված «Հայաստանի

Հանրապետության կառավարությունը» բառերը ևս առաջարկում ենք փոխարինել «Կառավարությունը» բառով:

4. Նախագծում «ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» բառերը առաջարկում ենք հանել:

5. Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:

6. «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում առաջարկում ենք «3.1-րդ» գրելաձևը փոխարինել «3.1-ին» գրելաձևով՝ պահպանելով դասական թվականների ճիշտ գրելաձևը:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծերի փաթեթում Սահմանադրության համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացված առաջարկությունների հիման վրա ապահովել Նախագծերի փաթեթով սահմանված կարգավորումների հստակությունը, ինչպես նաև դրանց համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)

15.09.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)

15.09.2025թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Ներկայացված նախագծերի փաթեթով (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) առաջարկվում է՝

- վերանայել «պետական պարտք» հասկացությունը՝ դրանում բացառելով կենտրոնական բանկի արտաքին պարտքն ու պետական երաշխիքը և ներառելով համայնքների պարտքը, ըստ այդմ՝ ամրագրելով համայնքի պարտքի կառավարման հետ կապված ընդհանրական կարգավորումներ և սահմանելով, որ համայնքը փոխառու միջոցներ կարող է ներգրավել միայն ներքին աղբյուրներից,

- սահմանել «հանրային հատվածի պարտք» հասկացությունը և դրա կազմում ներառել պետական պարտքը, հանրային հատվածի ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների պարտքը,

- վերանայել պետական պարտքի ներգրավման նպատակները, ինչպես նաև պետական պարտքի կառավարման հիմնական նպատակը,

- ամրագրել պետական արտաթուփային պարտատոմսերի թողարկման հստակ լիազորություն՝ այն վերապահելով լիազոր մարմնին,

- նախատեսել փոխառությունների տարեկան ծրագրի մշակման և հրապարակման օրենսդրական պահանջ,

- սահմանել լիազոր մարմնի իրավասությունը՝ վարկային միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո կատարելու պայմանագրով նախատեսված փոփոխություններ,

- երաշխիքներին առնչվող դրույթները «Պետական պարտքի մասին» օրենքից տեղափոխել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք՝ ապահովելով բյուջետային երաշխիքների հետ կապված իրավահարաբերությունների համախմբված և ամբողջական կարգավորումը, սահմանել պայմանական պարտավորությունները պետական պարտքի մեջ ներառելու պայմաններն ու դեպքերը և այլն:

Ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները:

Ա) Նախագծերի փաթեթի կազմում ընդգրկված՝ **«Պետական պարտքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի** (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.

1. Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, որպես պետական պարտքի աղբյուրներ, սահմանվում են՝

- ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական և արտաթուփային պարտատոմսերը,

- ռեզիդենտների կողմից ձեռք բերված համայնքային պարտատոմսերը:

Խնդիրը կայանում է նրանում, որ մեթոդաբանական առումով պարտատոմսերն, ինքնին, չեն կարող հանդիսանալ պետական պարտքի ձևավորման լիարժեք աղբյուր, քանի որ պարտատոմսերը դրամական միջոց չեն հանդիսանում և դրանք հնարավոր չէ մուտքագրել պետական բյուջեի գանձապետական հաշվին: Հետևաբար, որպես պետական պարտքի աղբյուր և բաղադրիչ հանդես են գալիս ոչ թե բուն պարտատոմսերը, այլ դրանց տեղաբաշխումից ստացված դրամական միջոցները: Այս կապակցությամբ առաջարկում ենք Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի «պարտատոմսերը» բառերը

փոխարինել «պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված դրամական (արտարժույթային) միջոցները» բառերով:

Բ) Նախագծերի փաթեթի կազմում ընդգրկված՝ **«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի** (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.

1. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի նոր խմբագրությամբ տեքստի 10-րդ մասով սահմանվում է, որ. «Այն անձինք, որոնց համար տրամադրվել են բյուջետային երաշխիքներ, երաշխիքային ծրագրի ավարտից հետո պետական բյուջե պետք է վճարեն միջնորդավճար՝ երաշխիքային գումարի 1 տոկոսի չափով: **Բյուջետային երաշխիքների տրամադրման դիմաց, բացի միջնորդավճարից, պետական բյուջեի օգտին կարող են գանձվել այլ վճարներ:**», ինչից անհայտ է մնում, թե ո՞ր վճարների մասին է գնում խոսքը: Եթե այդ «այլ վճարները» արդեն իսկ սահմանված են օրենքով, ապա անհրաժեշտ հստակ հղում կատարել համապատասխան իրավական ակտին, իսկ եթե դրանք դեռևս սահմանված չեն, բայց կարող են սահմանվել՝ անհրաժեշտ է հստակեցնել այդ հանգամանքը: Նշված երկու դեպքում էլ, տվյալ դրույթի հստակեցման և տարընթերցումներից խուսափելու նպատակով, առաջարկում ենք նշված մասի «կարող են գանձվել» բառերից հետո ավելացնել «օրենքով սահմանված» բառերը:

2. Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող՝ Օրենքի 21-րդ հոդվածի նոր՝ 8.5.-րդ հոդվածի «գ» և «դ» կետերով նախատեսվում է.

« - սահմանել, որ եթե Ազգային ժողով ներկայացվող առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծում կառավարության պարտքը նախորդ տարվա ղեկտենների 31-ի դրությամբ գերազանցել է նախորդ տարվա ՀՆԱ-ի 60%-ը, ապա տվյալ տարվա ընթացքում կառավարության կողմից արգելվում է ստանձնել պայմանագրային պայմանական որևէ նոր պարտավորություն և բյուջետային երաշխիքներից բխող որևէ նոր պարտավորություն, **բացառությամբ եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է Ազգային ժողովի կողմից հաստատված պետական բյուջեի մասին օրենքում.**

- սահմանել, որ եթե նախորդ տարվա ղեկտենների 31-ի դրությամբ կառավարության պարտքի, պայմանագրային պայմանական պարտավորությունների և բյուջետային

երաշխիքներից բխող պարտավորությունների հանրագումարը գերազանցում է նախորդ տարվա ՀՆԱ-ի 70%-ը, ապա տվյալ տարվա ընթացքում կառավարության կողմից արգելվում է ստանձնել պայմանագրային պայմանական որևէ նոր պարտավորություն կամ բյուջետային երաշխիքներից բխող նոր պարտավորություն, **բացառությամբ եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է Ազգային Ժողովի կողմից հաստատված պետական բյուջեի մասին օրենքում:**»:

Հարկ ենք համարում նշել, որ գործող իրավակարգավորումների համաձայն (տես «Պետական պարտքի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը). «Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքի և Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի հարաբերակցության սահմանային շեմը 60 տոկոս է:», որի մասով որևէ բացառություն նախատեսված չէ, ինչն էլ հանդիսանում է պետական պարտքի կառավարելիության և տնտեսական անվտանգության ապահովման երաշխիքներից մեկը: Առաջարկվող իրավակարգավորումների համաձայն ոչ միայն այդ սահմանային շեմը բարձրացվում է մինչև ՀՀ նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 70 տոկոսը, ինչը «պետական պարտք» հասկացության մեթոդաբանական փոփոխությունների համատեքստում գուցե նորմալ է, սակայն խնդիրը կայանում է նրանում, որ այս կանոնի համար սահմանվում է այնպիսի բացառություն (այն է՝ «եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է Ազգային Ժողովի կողմից հաստատված պետական բյուջեի մասին օրենքում»), որ սահմանային այդ շեմը գործնականում վերանում է և կարող է հասնել ցանկացած մեծության՝ դրանով իսկ առաջացնելով պետական պարտքի կառավարելիության կորստի և տնտեսական անվտանգության ռիսկերի առաջացման, քանզի՝

- հաստատված պետական բյուջեի մասին օրենքում նշված սահմանային շեմը գերազանցող նոր պարտավորության ներառումն իրենից որևէ երաշխիք չի ներկայացնում, որ տվյալ պահի դրությամբ պետական պարտքի ծավալը գտնվում է կառավարելիության և վերահսկելիության պատշաճ շրջանակներում,

- ՀՀ նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 70 տոկոսի շեմի գերազանցումից հետո, հաշվի առնելով սահմանվող բացառությունը, որևէ նոր սահմանային շեմ չի նախատեսվում (ինչն էլ թույլ է տալիս փաստել, որ գործնականում այդ շեմի վերին սահմանը վերանում է),

- այս կապակցությամբ որևէ կարգավորում չի նախատեսվում այն մասին, թե հաստատված պետական բյուջեում նոր պարտավորության ներառման դեպքում պետական բյուջեի եկամտային և ծախսային մասերում ինչպիսի փոփոխություններ կարող են կատարվել և ինչպիսիք չեն կարող կատարվել:

Բացի վերը բերված դիտարկումներից, հարկ ենք համարում նաև նշել, որ «եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է Ազգային Ժողովի կողմից հաստատված պետական բյուջեի մասին օրենքում» արտահայտությունը ոչ ճիշտ և ինչ-որ տեղ անիմաստ արտահայտություն է, քանի որ պետական բյուջեի մասին օրենքը (այնպես՝ ինչպես մյուս բոլոր օրենքները) Ազգային Ժողովը ոչ թե «հաստատում է», այլ ընդունում է, որն էլ դրանից հետո ստորագրվում և հրապարակվում է Հանրապետության նախագահի կողմից (տես Սահմանադրության 129-րդ հոդվածը), իսկ մյուս կողմից էլ պետական բյուջեի մասին օրենքի ընդունման կամ հաստատման հանգամանքի շեշտումը տվյալ պարագայում որևէ իմաստ և իրավական ծանրաբեռնվածություն չունի (այն դեպքում, երբ շատ կարևոր է հստակ նշել, թե պետական բյուջեի ո՞ր օրենքի մասին է գնում խոսքը): Ուստի, նշված արտահայտության «Ազգային Ժողովի կողմից հաստատված» բառերը կարելի է (և պետք է) փոխարինել «տվյալ տարվա» բառերով:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը, հատկապես դրա կազմում ընդգրկված «Պետական պարտքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը ֆինանսատնտեսագիտական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման, իսկ որոշ դրույթներ՝ նաև վերաիմաստավորման կարիք ունեն:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

(հեռ.՝ 011 513-668)

03.09.2025թ.

Մոցիալական փորձաքննության արդյունքները

Ներկայացված նախագծերի փաթեթով (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) առաջարկվում է փոփոխություն կատարել «Պետական պարտքի մասին» օրենքում, փոփոխություններ և լրացումներ կատարել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում, ինչպես նաև փոփոխություններ կատարել «Հիմնադրամների մասին» օրենքում:

Նախագծերի փաթեթով մասնավորապես առաջարկվում է՝

- վերանայել պետական պարտք հասկացությունը՝ դրանում բացառելով կենտրոնական բանկի արտաքին պարտքն ու պետական երաշխիքը և ներառելով համայնքների պարտքը, ըստ այդմ՝ ամրագրելով համայնքի պարտքի կառավարման հետ կապված ընդհանրական կարգավորումներ և սահմանելով, որ համայնքը փոխառու միջոցներ կարող է ներգրավել միայն ներքին աղբյուրներից.

- սահմանել «հանրային հատվածի պարտք» հասկացությունը և դրա կազմում ներառել պետական պարտքը, հանրային հատվածի ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների պարտքը.

- ամրագրել պետական արտարժույթային պարտատոմսերի թողարկման հստակ լիազորություն՝ այն վերապահելով լիազոր մարմնին.

- սահմանել լիազոր մարմնի իրավասությունը՝ վարկային միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո կատարելու պայմանագրով նախատեսված փոփոխություններ.

- երաշխիքներին առնչվող դրույթները «Պետական պարտքի մասին» օրենքից տեղափոխել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք՝ ապահովելով բյուջետային երաշխիքների հետ կապված իրավահարաբերությունների համախմբված և ամբողջական կարգավորումը, սահմանել պայմանական պարտավորությունները պետական պարտքի մեջ ներառելու պայմանները և դեպքերը և այլն:

Նախագծերի փաթեթի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԼԻԼԻԹ ՍԱՐԿՈՍՅԱՆ

Հեռ. /011/ 513 235 /Ներք. 1618/

08.09.2025թ.